

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՋՈՒԳԱԿԵՌ. ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 1899 թ. «ԱՐԱՐԱՏ»-Ի
ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ՀԱՄԱՐԻ)

«Եւ իմն պարտ է գործել զգործս
այնորիկ, որ առաքեացմ զիս. մինչ աւտր
կայ. զայ զհշեր. յորժամ ոչ ոք կարէ
գործել»:

(ՅՈՎՀ. Թ 4)

ՄԱՐԴԻԿ սովորաբար ուրախ դէմքերով դիմում են միմեանց՝ «ՅՈՐՈՒՄԱՆՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ» մաղթելու: Այդ ուրախութիւնը իւր արտաքին կողմերով յաճախ չափապանցութեան է հասնում՝ կեր ու խում, աղաղակ փողոցների վերայ, մինչեւ իսկ անկարգութիւններ, որ քարոյական աչքի և ականջի համար անախորժ լինել կարող է:

Բայց այսպէս չէ այն մարդկանց համար, որոնք կեանքի վերայ լրջութեամբ են նայում, որոնց ուսերի վերայ սրբապան և վեհ կոչումն է ծանրանում՝ ժառայելու ժողովրդին, ժառայելու յաւիտենական բարեաց զաղափարին: Նոր տարուայ օրը ուրախութեան և զուարճութեան օր չէ, այլ մի սրբապան և նուիրական վայրկեան, երբ, մեր հոգու բոլոր պօրութիւնները լարած, պիտի քաժանուիքք հին տարուց և նորի մէջ մտնենք. քրիստոնեայի համար Նոր տարուայ օրը աղօթքի և հոգևոր հաշուետուութեան օր է Աստուծոյ և խղճի առաջ:

Տարեվերջին հաստատութիւնները փակում են իրենց տօմարները և հաշիւ տալիս աւելի քարճր հաստատութիւնների: Այսպէս պէտք է լինի և անհատը. նա հաշիւ պէտք է տայ Աստուծոյ և իւր խղճի առաջ, թէ ի՞նչ է ձեռք բերել անցած տարուայ մէջ, որ մնայուն է, որ տևական է և ոչ այնպէս անցաւոր, ինչպէս հին տարին էր: Նոր տարուայ շնորհաւորութիւնը յիշեցնում է մեզ, որ հինք անցաւ անդառնայի կերպով, ուստի և պարտաւոր ենք խորասուլուել այդ անցեալի մէջ, որոնել մեր կեանքի, մեր գործի դրական կողմերը, գտնել թերին՝ ապագայում ուղղելու համար: Մենք իրաւունք ունինք ուրախանալու միայն այն դէպքում, երբ մեր հոգու հաշուեմատեանները ուղիղ են, երբ անցաւոր ժամանակի մէջ այնպիսի քարիք ենք ձեռք բերել, որ մեզ համար և մեր ժողովրդի կամ Եկեղեցու համար տևական նշանակութիւն ունի: Այս մտքով իրաւունք ունինք Նոր

տարուայ տօնախմբութեան վերայ աւելի բարձր. սրբապան տեսակէտով նայել, քան լոկ արտաքին պուարճութեան և ուրախութեան. որ տարաբարադրաբար ընդհանրացած է թէ՛ մեր և թէ՛ ուրիշ հասարակութիւնների մէջ: Մենք երբէք մտայլ կեանքի բարոյող չենք. բայց կեանքը չպետք է իւր լրջութիւնը կորցնէ այնպիսի նուիրական վայր փոխներին. որ մեր ապագայի համար ծանրակշիռ նշանակութիւն ունեն:

Արդ, ի՞նչն է տեական, ի՞նչն է մնայուն. որ անցնող ժամանակի մէջ ձեռք բերել կարելի է: Այս հարցի պատասխանը Փրկիչն է տալիս. «Իճճ պարտ է գործել զգործս այնորիկ. որ առաքեացն զիս, մինչ ատուր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել»: Ժամանակը շահեցնելու միջոցը գործն է: Անցնող ժամանակի մէջ դրականը աշխատանքով ձեռք բերուած հոգևոր բարիքն է: Նիւթական բարիք ձեռք բերելու համար մեծամեծ ջանքեր են հարկաւոր. ո՛րքան ևս առաւել հոգևոր հարստութեան, տեական բարեաց համար: Ժամանակն անցնում է նետի նման, երկիրը կատարում է իւր ընթացքը տիեզերքի Տիրոջ կարգադրութեան համաձայն. մեկ մնում է միայն օգտուել «մինչ ատուր կայ, գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել»: Քրիստոնէութեան համար աշխատանքը նուիրական գաղափար է և ծուլութիւնը մահացու մեղքերից մէկը: Քրիստոնէայ մարդու կեանքի սկզբունքներից մէկը պիտի լինի աշխատանքի գաղափարը: Գործն է կեանքի և շարժման նշանը: Բայց ոչ ամենայն գործ, որ շարժում է, կեանք է: Կան գործեր, որ ոչ թէ յաւիտենական բարիք, այլ չարիք են ծնում: Փրկչի պահանջած գործերը հոգևոր կեանքի, լուսոյ գաղափարի յաղթութեան գործերն են, որոնք միմեանց յարդրելով մարդկային կեանքի մէջ՝ հոգևոր նոր տարիներ և շրջաններ են յառաջ բերում: Մեր անցած տարուայ գործերի քննութեան չափը պէտք է լինի այն տեսակէտը, թէ որքան մենք մեր գործերով նպաստել ենք մեր անձի փրկութեան, թէ որքան նպաստել ենք հայ ժողովրդի կրօնական-բարոյական, հոգևոր-քաղաքակրթական կեանքի վարճացման: Իւրաքանչիւր ոք պարտաւոր է աշխատել իւր չափով, իւր հոգու բոլոր կարողութեամբ, բայց միշտ այն գիտակցութեամբ, թէ նորա կատարած գործը մի կաթիլ է օվկիանոսի մէջ. «թէ ծառայք անպիտան ենք, զոր պարտեաքն առնել՝ արարաք»: Այսպէս պէտք է մտածէ և գործէ Հայաստանեայց Եկեղեցու իւրաքանչիւր հարապատր՝ լինի քահանայ, վարդապետ, թէ աշխարհական անձն:

Աղմուկ հանել, թմբուկներ վարնել, առանց դրական բան կատարելու՝ չնչին մարդկանց յատկութիւնն է: Ամենայն ինչ հոգևորականներից սպասել, սակայն ոչ մի ջանք չխնայել անճերելի միջոցներով նոցա գործունէութիւնը ջլատելու. հայոց ազգի ամենայն չարեաց, թշուառութեան պատճառ հոգևորականներին համարել և անխոհեմ գործերով նորա անկման խորխորատը փորել. ծանր բեռներ դնել հոգևորականութեան վերայ, առանց մատի չափ նորա հոգևոր վերակենդանութեան և վարճացման նպաստելու՝ նշանակում է կեանքը, պատմութիւնը իւր երևոյթներով չըմբռնել:

Ի հարկէ մենք անտեղեակ չենք մեր թերութիւններին՝ շատ անելի խորն ենք ըմբռնում, թէ որտեղ է չարեաց արմատը. բայց ո՞ւր է դիտարկական այն գաւազանը, որով աշխարհը միանգամից կերպարանափոխ կարելի է անել: Մի ժողովուրդ, որ ամենայն տեսակ լուսանքներ, պրպարտութիւններ առանց յուզուելու կարդայ և մինչև իսկ խրախուսել կարող է. մի ժողովուրդ, որի մէջ մասնւի զբոշակի շուրջը խմբուած շատ անձնատրութիւններ գիտակցաբար ստել, հակառակորդներին անվայել կերպով ցեխոտել կարող են՝ առանց խղճի փոքրիկ խայթ զգալու. մի ժողովուրդ, որ անտարբեր նայել կարող է, թէ ինչպէս նախնեաց թողած սրբական ասանդները իր իսկ տհաս և անհաւատարիմ վաւակների ձեռքով քանդուում են՝ բնական է, որ իր ամենամեծ հաստատութիւնների մէջ ևս մեծ թերութիւններ երևան հանէ:

Մենք չենք ուրանում մեր թերութիւնները. գիտենք, որ մեր առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները թափուր են, որ մեր քահանայութիւնը ընդհանուր առմամբ տգէտ է, որ մեր վանքերն իրենց կոչման ծառայել չեն կարողանում, որ մենք կենդանի խօսքի քարոզիչներ չունենք, որ մեր հոգևոր երգեցողութիւնը բարեփոխութեան կարօտ է, որ մենք աղքատների խնամատարութիւն չունինք՝ Աւետարանի և Եկեղեցու պատմութեան ցոյց տուած պահանջների համեմատ, որ մենք քրիստոնէական որբանոցներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ չունինք մեր նախնեաց նման: Բայց և այն գիտենք, որ հոգևոր կեանքն էլ իր աճման և վարգազման պայմաններն ունի, որ բարձրագոյ աղաղակներն ու ճոճոացող բառերը ոչ մի ազգի տուն չեն շինել, այլ լուրջ, երկարատև և անձնուէր գործունէութիւն է պէտք:

- Ահա ժամանակը շահեցնելու միջոցը և Փրկչի ցոյց տուած ճանապարհը:

Թող զան ու անցնին տարիները՝ մենք լուռ ու մուռ կրածանուինք նրանցից. բայց երբ նկատենք ցանկալի կրօնական-հոգևոր կեանքի արշալոյսի նշանները, այն ժամանակ միայն կզգանք, որ ժամանակը ի վուր չենք կորցրել և ցնծութեան աղաղակներով կզոչենք. «Շնորհաւոր Նոր տարի»:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆ



ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՆՅ

ՆՈՐ ՏԱՐԻ, ՀԻՆ ՄԱՐՏԱՏՐԱՎԵՐՆԵՐ

Պատմութեան թեթև քողով շղարշվեց 1998-ը: Այլևս անցյալով ենք խոսելու երեկվա նորի մասին և փորձելու ենք իմաստավորել այսօրը՝ 1999-ը. որ ընդամենը մեկ տարի է նոր մնալու, ինչպէս եղել է դարեր ի վեր: Մինչ նոր տարվա անդրազին համարի խմբագրական գրելը, մենք